

# Հայտորոշիչ Թեստ

## Հանրահաշիվ

### 8 -րդ դասարան

Ամիս/ամսաթիվ \_\_\_\_\_

Անուն/ազգանուն \_\_\_\_\_

Ուսուցիչ

Թեմայի անունը	Հարցերի համարները
Միանդամներ	1,2,7,13
Բազմանդամներ	4,6,9,10
Կրճատ բազմապատկման բանաձևեր	3,5,14,8
Մեկ անհայտով գծային հավասարումներ	3,5,11,12,15

1. Լրացրու բաց թողնված բառերը:

\_\_\_\_\_ անվանում են թվերի և տառերի արտադրյալ հանդիսացող հանրահաշվական արտահայտությունը: Այդ տառերը և թվերը անվանում են տվյալ միանդամի \_\_\_\_\_:

2. Ընտրիր ճիշտ տարբերակը.

Միանդամների գումարն անվանում են՝

1. Բազմանիստ
2. Բազմանկյուն
3. Բազմանդամ
4. Թվային արտահայտություն

3. Լրացրու բաց թողնված բառերը:

Ուղիղը, որի վրա ընտրված է \_\_\_\_\_, \_\_\_\_\_, և  
\_\_\_\_\_ կոչվում է կոորդինատային առանցք:

4. Արդյո՞ք ճիշտ է կատարված բազմանդամի արտադրիչների վերլուծումը:

$$3x - 12x^2 = 3x(1 - 4x)$$

1. այո
2. ոչ

5. Ո՞ր պնդումներն են ճշմարիտ առաջին աստիճանի մեկ անհայտով հավասարումների վերաբերյալ:

1. Այդ հավասարման մեջ թիվն անվանում են անհայտ գործակից
2. Լուծել հավասարումը, նշանակում է գտնել նրա ազատ անդամը:
3. Մեկ անհայտ պարունակող հավասարման անհայտ են անվանում այն թիվը, որը հավասարման մեջ անհայտի փոխարեն տեղադրելով ստացվում է ճիշտ թվային հավասարություն:

6. Դուրս գրիր բազմանդամի բոլոր անդամները:

$$2x^2 - 3xy + xy - 7y$$

7. Գրեք միանդամի արտադրյալը աստիճանի տեսքով :

1. hhhhhh
2. aaaaaaaaa
3. cc

8. Օգտագործելով տարբերության քառակուսու բանաձևը հաշվեք՝

1.  $49^2$
2.  $198^2$

9. Պարզեցրեք բազմանդամը:

$$1,1x - 2,7y + 0,8x - x + 3y$$

10. Բազմանդամը բերեք կատարյալ տեսքի և որոշեք նրա աստիճանը:

$$4a^2b + 5b^2a + baa + 3aba$$

11. Լուծեք հավասարումները:

1.  $18 - 10x = 0$

2.  $3x + 2 = 5x - 7$

12. Տրված են  $A(-3, 4)$ ,  $B(2, -1)$ ,  $C(-2, 0)$ ,  $D(4, 3)$  կետերը: Գտեք  $AB$  և  $CD$  հատվածների հատման կետերը:

13. Համեմատեք բազմանդամները և միանդամները՝ Վենսի դիագրամի միջոցով: Բերեք օրինակներ:

14. Ինչպե՞ս ստանալ տարբերության խորանարդի բանաձևը գումարի խորանարդի բանաձևից: Հիմնավորել օրինակի միջոցով:

15. Եթե չլիներ կորդինատային համակարգը, ապա ինչպե՞ս կորոշեինք մարմնի դիրքը հարթության վրա: Պատասխանը հիմնավորեք, բերեք օրինակներ: